

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/22**

ք. Երևան

 2018թ.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի փոխարինող Սամվել Սողոմոնյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վարդան Բաղդասարյան, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև 3.448.100 (երեք միլիոն չորս հարյուր քառասունուրեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արիեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 28 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:


7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900000901372, 900000901349
ՀՎՀՀ 02507171

Աշխատակազմի ղեկավարի փոխարինող
Ս. Սողոմոնյան



(ստորագրություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Բանկ՝ «Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220083335012000
ՀՎՀՀ՝ 08417829

Տնօրեն՝ Վ. Բաղդասարյան



(ստորագրություն)
Վ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության			մատուցման	
			չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	50111130	Տես Հավելված N 1.1	դրամ	3.448.100	1	Ք. Երևան	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն
Ք. Երևան, կառավարության 3 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900000901372, 900000901349
ՀՎՀՀ 02507171

Աշխատակազմի ղեկավարի փոխարինող
Ս. Աղոյան



(ստորագրություն)


Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Բանկ՝ «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220083335012000
ՀՎՀՀ՝ 08417829

Տնօրեն՝ Վ Բաղդասարյան



(ստորագրություն)
Վ.Տ.


Գնման առարկայի Տեխնիկական բնութագրեր

(ՀՀ դրամ)

1	2	3
</>	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	1 չափաբաժին Մասնակցի կողմից առաջարկվող գները Հունդայի Տուբսոն 2.7
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում	
1	Բռնկման համակարգի ստուգում	10
2	Կցորդման համակարգի ստուգում	10
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	10
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	10
5	ABS համակարգի ստուգում	10
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	10
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	10
	1.Շարժիչ	
8	Շարժիչի հանում և տեղադրում	50.000
9	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	100.000
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	30.000
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	14.000
12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով	20.000
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	500
14	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	500
15	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	4.000
16	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 հատ	3.000
17	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	16.000
18	Ծնկածև լիսեռի հղկում	6.000
19	Ծնկածև լիսեռի փոխարինում	3.000
20	Ծնկածև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	4.000
21	Ծնկածև լիսեռի ատամնանիվի փոխարինում	1.000
22	Ծնկածև լիսեռի ուղղում	10
23	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10.000
24	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	4.000
25	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում հանված շարժիչի դեպքում	1.000
26	Շարժիչի բլոկի փոխարինում հանված շարժիչի դեպքում	1.000
27	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ	40.000
28	Շարժիչի բլոկի հղկում	1.000
29	Մխոցի փոխարինում 1 հատ	1.000
30	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	10.000
31	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում հանված շարժիչի դեպքում	2.000
32	Բաշխիչ լիսեռի ակնոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	10
33	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	4.000
34	Փոկանիվի փոխարինում	4.000
35	Շարժիչի շղթայի փոխարինում հանված շարժիչի դեպքում	10
36	Շարժիչի շղթայի փոխարինում	10
37	Յուղի մղիչի շղթայի փոխարինում հանված շարժիչի դեպքում	10
38	Յուղի մղիչի շղթայի փոխարինում	10
39	Շարժիչի վանոսների փոխարինում	10
40	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	3.000
41	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	4.000
42	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	1.000
43	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	4.000
44	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	13.000
45	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	10
46	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	4.000
47	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում	10
48	Յուղի մղիչի թաթիկի փոխարինում	10
49	Յուղի ծորակի փոխարինում	10

50	Օդաբաշակ փողրակի փոխարինում	
51	Շարժիչի կոնսրեւտորի փոխարինում (տուրբոմոդիչ)	1.000
52	Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մոդիչի փոխարինում	10
53	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
54	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
55	Ուղղորդիչ վառանների փոխարինում	3.000
56	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
57	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում հանված ՓՏ-ի դեպքում	10
58	Շարժիչի կափույրի փոխարինում	10
59	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	1.000
60	Մխոցամատի փոխարինում	1.000
61	Շարժիչի շարժաթևի փոխարինում	1.000
62	Մխոցային օդակների փոխարինում 1 կ-տ	2.000
63	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	4.000
64	Ատամնանիվի փոխարինում	10
65	Ատամնանիվի փոկի փոխարինում	14.000
66	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	20.000
67	Սուխարիկ փոխարինում	10
68	Շարժիչի կալունի փոխարինում	10
69	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	10
70	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	10
71	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	10
72	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	10
73	Շարժիչի յուղի արանբաշափիչի (Քցտ) իրանի փոխարինում	10
74	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	10
75	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	8.000
76	Շարժիչի զամասեղի փոխարինում	10
77	Շարժիչի զամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	10
78	Գլխիկի հեղույսի փոխարինում	10
79	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	10
80	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	10
81	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	4.000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		4.000
82	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	
83	Ավտոմեքենայի յուղում	2.000
84	Համակարգչային ախտորոշում, թերութունների վերացմամբ	1.000
85	Յուղի ռադիատորի փոխարինում	4.000
86	Յուղի ռադիատորի նորոգում	1.000
87	Յուղի գտիչի փականի փոխարինում	10
88	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
89	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
90	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	4.000
91	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	500
92	Վառելիքի փողրակի փոխարինում	500
93	Վառոցքի մոմի փոխարինում 1կ-տ	1.000
94	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	6.000
95	Օդի գտիչի փոխարինում	1.000
96	Կոնդիցիոների գտիչի փոխարինում	500
97	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	500
98	Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում	1.000
99	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	1.000
100	Օդաբաշի փողրակի հանում և տեղադրում	500
101	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	1.000
102	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում 1 կ-տ	4.000
103	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	10.000
104	Բոցամուղի կողավորում	12.000
105	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	500
106	Բենզամոդիչի փոխարինում	500
107	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	8.000
108	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3.000
109	Բռնկման կարգավորում	500
110	ՇՕ կարգավորում	1.000
111	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	1.000
112	Ղեկավարման բլոկի վերանորոգում	4.000
113	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	10.000
114	Վառելիքի բաքի մաքրում	2.000
		1.000

115	Արագարարի ոտնակի փոխարինում	10
116	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում	10
117	Օդի ծախսի տվիչի փոխարինում	2.000
118	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	500
119	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	2.000
120	Բենզոբաքի բենզոմոնիտի ցանցի փոխարինում	10
121	Բենզոբաքի բենզոմոնիտի ցանցի մաքրում	10
122	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	10
123	Տվիչի փոխարինում	1.000
3. Սառեցման և արտածման համակարգ		
124	Հովհարի փոխարինում	4.000
125	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
126	Ուղիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
127	Ուղիատորի շրջանակի փոխարինում	10
128	Ուղիատորի կալունակի փոխարինում	10
129	Ուղիատորի փողրակի փոխարինում	1.500
130	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
131	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
132	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	10
133	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	4.000
134	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	10.000
135	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	10.000
136	Ընդարձակող բաքի փոխարինում	1.000
137	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	10
138	Ջրի ծորակի փոխարինում	10
139	Հովացման հիդրոկցորդի փոխարինում	10
140	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	10
141	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1.000
142	Հովհարի թևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
143	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	20.000
144	Վառարանի ռադիատորի նորոգում	10
145	Վառարանի շարժիչի փոխարինում	8.000
146	Թերմոստատի փոխարինում	6.000
147	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	10.000
148	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	10
149	Գեներատորի փոկի փոխարինում	2.000
150	Գեներատորի փոկի ձգող հուլովակի փոխարինում	2.000
151	Ջրի ռադիատորի վերանորոգում	30.000
152	Թերմոստատի միջադիրի փոխարինում	10
153	Սառեցման համակարգի օդահանում	500
154	Խլարարի զոֆրայի փոխարինում	6.000
155	Կատալիզատորի հանում	4.000
156	Խլարարարի կատալիզատորի տվիչի փոխարինում	1.000
157	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
158	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	10
159	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	10
160	Խլարարի ներդիրի փոխարինում	1.000
161	Խլարարի կախոցի փոխարինում	500
162	Կալունակի փոխարինում	10
163	Ռեզոնատորի փոխարինում	10
164	Հովացման հեղուկի փոխարինում	2.000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
165	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
166	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները	10
167	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	10
168	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
169	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	
170	Կցորդման երկթանիի փոխարինում	
171	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	
172	ՓՏ-ի փոխարինում	
173	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	
174	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	
175	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում	
176	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	35.000
177	ՓՏ-ի քանդում, արտավորում, հավաքում	
178	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	

179	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	
180	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	
181	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	
182	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	
183	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	
184	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	
185	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում	
186	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	
187	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	
188	ՓՏ-ի յուղի փոխարինում	
189	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	10
190	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	180.000
191	ԱՓՏ-ի հավաքածույի փոխարինում	70.000
192	ԱՓՏ-ի փոխարինում	30.000
193	ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	4.000
194	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	20.000
195	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	50.000
196	ԱՓՏ-ի սուլենոիդների փոխարինում	20.000
197	ԱՓՏ-ի համակարգչի և սուլենոիդների փոխարինում	10.000
198	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	12.000
199	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաբուկերի փոխարինում	20.000
200	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	4.000
201	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	4.000
202	ԱՓՏ-ի հիդրոազույցի փոխարինում	4.000
203	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	12.000
204	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	3.000
205	ԱՓՏ-ի գտիչի լվացում, մաքրում քարտերի հանում և տեղադրումով	10.000
206	ԱՓՏ-ի գտիչի լվացում, մաքրում քարտերի հանում և տեղադրումով	10
5. Բաշխիչ տուփի կարդանային լիսեռ		
207	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	4.000
208	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
209	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	4.000
210	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	10
211	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	10
212	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	10
213	Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում	10
214	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	3.000
215	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	3.000
216	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	1.000
217	Բաշխիչ տուփի երկժամիի փոխարինում	1.000
218	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	1.000
219	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	1.000
220	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	1.000
221	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	3.000
222	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	3.000
223	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
224	Տվիչի փոխարինում	10
225	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	10
226	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
227	Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում	10
6. Առջևի և հետևի կամրջակներ		
228	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
229	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	4.000
230	Առջևի կամրջակի կիսասնու հանում և տեղադրում կամ փոխարինում	10
231	Առջևի կամրջակի կիսասնու առանցքակալի փոխարինում	10
232	Առջևի կամրջակի կիսասնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	1.000
233	Կամրջակի յուղի փոխարինում	2.000
234	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
235	Առջևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	10
236	Առջևի կամրջակի տվիչի փոխարինում	1.000
237	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	1.000
238	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1.000
239	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	500
240	Հետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում	3.000
241	Հետևի կամրջակի կիսասնու հանում և տեղադրում կամ փոխարինում	3.000
242	Հետևի կամրջակի կիսասնու առանցքակալի փոխարինում	1.000

243	Հետևի կամրջակի կիսաստուն առանցքակալի խտաբուկերի փոխարինում	1.000
244	Հետևի կամրջակի բռուցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1.000
245	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	500
246	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	500
247	Կամրջակի տվիչի փոխարինում	1.000
248	Կամրջակի իրանի փոխարինում (փցսՍՍ)	10
7. Կախոց		
249	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
250	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	6.000
251	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	6.000
252	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
253	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
254	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	6.000
255	Անվակունդի զամասեղի և հեղուսի փոխարինում(մեկ անիվի համար)	3.000
256	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	6.000
257	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	4.000
258	Առջևի զսպանակի փոխարինում	1.000
259	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
260	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	10
261	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
262	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	2.000
263	Ներքևի լծակի հեղուսի փոխարինում	1.000
264	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	10
265	Անիվների պաշտպանիչի փոխարինում	2.000
266	Շարժիչի պաշտպանիչի փոխարինում	2.000
267	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4.000
268	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	1.000
269	Վերևի լծակի հեղուսի փոխարինում	500
270	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	2.500
271	Գնդե հողակապի պատյանի փոխարինում	10
272	Գնդե հողակապի փոխարինում	4.000
273	Գնդե հողակապի նորոգում	8.000
274	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
275	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	3.000
276	Առջևի կայունարարի կալունակի փոխարինում	1.000
277	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	3.000
278	Հետևի կախոցի անվաքացքի կարգավորում	4.000
279	Հետևի կայունարարի վռանների փոխարինում 1 հատ	3.000
280	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	3.000
281	Հետևի կայունարարի կալունակի փոխարինում	1.000
282	Հետևի զսպանակների փոխարինում	500
283	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	2.000
284	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3.000
285	Ջսպանի փոխարինում	10
286	Ջսպանի վռանների փոխարինում 1 հատ	10
287	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	4.000
288	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	10
289	Հետևի կախոցի սայլենտ-բլոկի սպասարկում	10
290	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	1.000
8. Ղեկային մեխանիզմ		
291	Ղեկասյունակի(USuSվՍՈ) հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	75.000
292	Ղեկասյունակի(USuSվՍՈ) արորիկի փոխարինում	10
293	Ղեկասյունակի (USuSվՍՈ) առանցքային սռնու փոխարինում	10
294	Ղեկասյունակի(USuSվՍՈ) խաչուկի փոխարինում	3.000
295	Ղեկասյունակի(USuSվՍՈ) վերանորոգման հավաքածուի փոխարինում	1.000
296	Ղեկասյունակի(USuSվՍՈ) քանդում, արատավորում, հավաքում	4.000
297	Ղեկասյունակի(USuSվՍՈ) կարգավորում	1.000
298	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	10
299	Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում	4.000
300	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածուի փոխարինում	10
301	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածուի նորոգում	10
302	Ղեկասյունակի պատյանի փոխարինում	10
303	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	10
304	Ղեկային մեխանիզմի փականքի և հակաառևանգման մեխանիզմի փոխարինում	2.000
305	Ղեկային մեխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում	10

306	Ղեկային ծողի առանցքակալի փոխարինում	2,000
307	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	4,000
308	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	10
309	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	10
310	ՂԿ-ի հողակալերի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
311	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	8,000
312	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	30,000
313	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
